Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/16 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

22.03.2024թ.
ժամը՝ 15:45

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Թորոսյան, Լ.Լևոնյան, Ա.Մանուկյան, Ա.Լալայան*

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

*Նիստից բացակայում է Անժելա Լալայանը

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտերի գնահատման մասին

Նիստը վերսկսվեց 22.03.2024թ. ժամը 15:45-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ-ն և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ-ի և Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ

22.03.2024թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ-ին Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով և ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ին 3-րդ չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակիցներ, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Վարդան Թորոսյան

_____ Լևոն Լևոնյան

_____ Արմենակ Մանուկյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան